https://doi.org/10.46991/S&L/2022.93.020

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Նորայր Ավագյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Իրավունքի տեսության կարևորագույն հարցերից են նյութական և ընթացակարգային կամ վարութային իրավունքի հարաբերակցությանը վերաբերող հիմնախնդիրները: Դա հատկապես նկատելի է վարչական իրավունքին առնչվող խնդիրներն ուսումնասիրելիս, քանի որ վարչական իրավունքի՝ որպես առանձին իրավունքի ճյուղի առանձնահատկությունն ու տարբերությունն իրավունքի մյուս ճյուղերից այն է, որ վարչական իրավունքը ներառում թե՛ նյութական, թե՛ վարութային իրավական նորմեր, ինչով արտահայտվում է վարչական իրավունքի դուալիստական բնույթը: Ավելին, որոշ հեղինակներ, հիմքում դնելով նաև վարչական դատավարության՝ որպես վարչական իրավունքի ինստիտուտ հանդիսանալու փաստարկները, վարչական իրավունքը դիտարկում են եռակազմ համակարգ[1]:

Առանց խորը վերլուծություններ կատարելու, քանի որ դրանք մեր հետազոտության առարկայից դուրս են, միայն արձանագրենք, որ մենք վարչական դատավարության իրավունքը համարում ենք վարչական իրավունքից դուրս առանձին իրավունքի ճյուղ[2]:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ վարչական իրավունքում ընթացակարգայինի առկայությունը բացառվում է, այն հիմնավորմամբ, որ ընթացակարգային նորմերով կարգավորվող հարաբերությունները եռակողմ լինելու պարտադիր հատկանիշ ունեն: Այս թեզի հիմքում դրվում է այն փաստարկը, որ վարչական իրավահարաբերությունը ընթացակարգայինի տեսակավորելու համար անհրաժեշտ է բացառապես երեք կողմերի առկայություն՝ 1) քաղաքացի, 2) պաշտոնատար անձ, որի գործողությունները վիճարկվում են, և 3) հարցը լուծելու իրավասությամբ օժտված անձ[3]:

---

[1] Տե՛ս **Давыдов К.В.** Докторская диссертация на тему «Административные процедуры: концепция правового регулирования», Нижний Новгород, 2020, էջ 38:

[2] Վարչական դատավարության իրավունքի առանձին ճյուղի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս **Մուղնեցյան Գ.** «Վարչական դատավարության ընթացակարգային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում», ատենախոսություն ԺԲ.00.02 Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2011, էջ 29-31: Տե՛ս նաև **Կոչուբաև Ա.** «Վարչական դատավարություն. ինստիտուտից՝ իրավունքի ճյուղ», «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2019, № 2 (29), էջ 17-22:

[3] Տե՛ս **Демин А. А.**, «Понятие административного процесса и кодификация административно-процессуального законодательства Российской Федерации», МГУ, Журнал административного производства. 2021. № 4. էջ 46:

Եթե վերը նշված տեսակետի հեղինակը բավարարվեր միայն այսքանով, ապա կարող էինք կարծել, որը խոսքը վարչական իրավահարաբերության և վարչադատավարական իրավահարաբերության հարաբերակցության մասին է, սակայն նա պնդում է, որ նշվածը պարզ և հուսալի միջոց է նյութական և ընթացակարգային հարաբերությունները տարբերակելու համար, և ընդգծում է, որ այն իրավահարաբերությունները, որում սուբյեկտները երկուսն են, տիպիկ նյութահիրավական հարաբերություններ են, և հակառակը՝ եթե սուբյեկտները երեքն են, ուրեմն ընթացակարգային իրավահարաբերություններ են[1]: Այս գաղափարը հիմք ընդունելով՝ հեղինակը հետևություններ է անում, որ պետական մարմնի և քաղաքացիների կողմից վարչահիրավական հարաբերությունների ոլորտում իրենց իրավունքների և պարտականությունների կատարման կարգն այլևս չի կարող վերագրվել ընթացակարգային կանոններին, քանի որ դրանց իրականացմանը հիմնականում ներգրավված են երկու սուբյեկտներ, և դրանցից ոչ մեկը չունի երկու կողմերի գործողությունների օրինականությունը վերահսկելու գործառույթ: Վարչական գործընթացը ներառում է վարչական իրավահարաբերությունների երկու կողմերի միջև վեճը քննող մարմնի գործունեության կարգը, ինչպես նաև վարչական դատարանի առջև կողմերի իրավունքների և պարտականությունների ամբողջությունը: Այսպիսով, ընթացակարգային իրավահարաբերությունների ամենաբնորոշ գիծը գործում երեք կողմերի առկայությունն է[2]:

Համամիտ չլինելով վերը նշված տեսակետին՝ գտնում ենք, որ նյութական և ընթացակարգային իրավունքի տարբերակման հիմքում առաջին հերթին ընկած է իրավունքի նորմի տեսակավորումը, այսինքն՝ այդպիսի դասակարգման առաջին հերթին ենթարկվում է իրավունքի նորմը, որով կարգավորվում է համապատասխան գործընթացը, և ցանկացած իրավունքի ճյուղում՝ սահմանադրական, միջազգային, քաղաքացիական և այլն, գոյություն ունեն ներճյուղային գործընթացներ և դրանք կարգավորող ընթացակարգային իրավունքի նորմեր, օրինակ՝ դատավորների ընտրության, նրանց կարգապահական պատասխանատվություն ենթարկելու, միջազգային պայմանագրերը վավերացնելու և բազմաթիվ այլ գործընթացներ: Սակայն, վարչական իրավունքի առանձնահատկությունը այն է, որ ոչ միայն ներառում է նյութականը և ընթացակարգայինը, ինչպես, օրինակ՝ վերը նշված մյուս իրավունքի ճյուղերը, այլև այստեղ ընթացակարգային իրավակարգավորումներն ու դրանցով կարգավորվող հարաբերությունները գերակշռող են, քան ցանկացած այլ իրավունքի ճյուղում, որտեղ առկա է նյութականի և ընթացակարգայինի համադրություն:

Մեր այս դատողության համար հիմք են նաև մի շարք վարչագետների կողմից վարչական իրավունքին տրված բնորոշումները: Դրանցից մի քանիսի մեջբերմամբ կտեսնենք, որ բոլորն ուղղակիորեն ընդգծում են վարչական իրավունքի ընթացակարգայնությունը:

Օրինակ, Նեպալի կառավարության էներգետիկայի, ջրային ռեսուրսների և ոռոգման նախարարության ներկայացուցիչ Իշվոր Թապան վարչական իրավունքը բնութագրում է որպես առանձին իրավունքի ճյուղ, որը կարգավորում է քաղաքացու և պետության հարաբերությունները և *ենթադրում է պետական իշ-*

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 46:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 47:

խանության իրականացում՝ այն համարելով պետական կառավարման իրավական դաշտի մի մասը[1]:

Ինչ վերաբերում է պետական կառավարմանը, ապա հեղինակը նշում է, որ այն հանրային քաղաքականության և հանրային ծրագրերի ամենօրյա իրականացումն է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ներգաղթը, սոցիալական բարեկեցությունը, պաշտպանությունը, տնտեսական կարգավորումը և այլն[2]:

Վերը նշված բնորոշումից երևում է, որ հեղինակը ևս ընդգծել է վարչական իրավունքի դուալիստական բնույթը՝ սահմանելով, որ այն կարգավորում է քաղաքացու և պետության հարաբերությունները և *ենթադրում է պետական իշխանության իրականացում*, որը ներառված է վարչական իրավունքի կարգավորման առարկայում:

Պրոֆեսոր Վիլիամ Ֆոքսը նշում է, որ վարչական իրավունքն ուսումնասիրում է, թե *ինչպես են որոշումներ կայացնում* կառավարման համակարգի այն մարմինները, որոնք չեն համարվում օրենսդիր կամ դատական: Այս մարմինները կոչվում են վարչական՝ դրանք սովորաբար տեղակայված են գործադիր իշխանության ճյուղում և պատասխանատու են կառավարման ամենօրյա խնդիրների իրականացման համար[3]:

Մեկ այլ արևմտյան վարչագետ այն կարծիքին է, որ վարչական իրավունքը մեխանիզմ է, որը նախատեսված է *վարչական կառավարումը կանոնակարգելու* համար: Վարչական իրավունքը ոչ միայն սահմանափակում է բյուրոկրատական կառավարության լիազորությունները, այլև օրինականություն և լիազորություն է տալիս պետական մարմինների գործողություններին[4]:

Վերոնշյալ բնորոշումները թույլ են տալիս հետևություն անել, որ վարչական իրավունքը ոչ միայն դուալիստական բնույթ ունի՝ պայմանավորված նյութականի և ընթացակարգայինի ընդգկրվածությամբ, այլ նաև դրա մեջ առավելապես արտահայտվում է ընթացակարգայինը՝ բնութագրվելով մի դեպքում որպես վարչական կառավարումը կանոնակարգող մեխանիզմ, մեկ այլ դեպքում՝ կառավարման համակարգի մարմինների կողմից որոշումներ կայացնելու գործընթացն ուսումնասիրող իրավունք և այլն:

Ուստի արձանագրելով, որ վարչական իրավունքն ունի երկատվածություն, որն արտահայտվում է վարչական իրավունքի մեջ թե՛ նյութական, թե՛ վարութային իրավունքի նորմեր ներառված լինելու փաստով և ելնելով մեր հետազոտության նպատակներից՝ անհրաժեշտ ենք համարում որոշակի պատկերացում կազմել վարչական իրավունքում նյութականի և ընթացակարգայինի հարաբերակցության վերաբերյալ:

Եթե նյութական իրավունքից կարելի է եզրակացնել, թե ով ում հանդեպ ինչ պահանջի իրավունք ունի, ապա ձևական իրավունքը սահմանում է, թե անձն

---

[1] Տե՛ս **Ishwor Thapa**, Administrative Law: Concept, Definition, Nature, Scope and Principle and its Sources, էլեկտրոնային հղումը՝ : https://www.researchgate.net/publication/347514733:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **William F. Fox, Jr.** Understanding Administrative law fourth edition, էջ 1, էլեկտրոնային հղումը՝ https://www.lexisnexis.com/documents/pdf/20090218103837_large.pdf :

[4] Տե՛ս **Christine B. Harrington, Lief H. Carter,** Administrative Law and Politics, The origins and meaning of Administrative law, էջ 25, էլեկտրոնային հղումը՝ https://uk.sagepub.com/sites/default/files/upm-assets/72280_book_item_72280.pdf :

ինչպես կարող է պետական մարմիններում ու դատարաններում կանոնակարգված ընթացակարգով իրականացնել իր այդ իրավունքը, և թե պետական մարմիններն ու դատարանները որ վարույթի միջոցով պետք է պաշտպանեն անձի իրավունքը[1]:

Իրավական գործընթացներն առաջին անգամ ի հայտ են եկել դեռևս մեր թվարկությունից առաջ Հին Հունաստանում և Հին Հռոմում[2]: Պատշաճ իրավական գործընթացների (Due process) և դրանց կարգավորվածության անհրաժեշտությունը Անգլիայում գիտակցվել և իրավական ձևակերպման է ենթակվել դեռևս 1354 թվականի ստատուտով (Liberty of Subject Act (28 Edward 3), որով ուղղումներ են մտցվել 1215 թվականի Ազատությունների Մեծ Խարտիայում: Իրավական գործընթացները իրենց նախատիպերով իրավունքում եղել են այն ժամանակվանից ի վեր, ինչ մարկդությանը հայտնի է իրավունքը՝ իր նախատիպերով հանդերձ և ապրել են իրենց որակական զարգացումը և բազմադարյա ճանապարհ անցնելով՝ հասել են մեզ՝ ներկայումս առկա որակներով ու տեսակներով[3]:

Ընթացակարգայինը ենթադրում է հատուկ կանոնակարգված գործընթաց, որին պարտավոր են հետևել մասնակիցները իրենց նյութական իրավունքով սահմանված իրավունքներն իրացնելիս: Նյութական իրավունքով այս կամ այն օբյեկտիվ իրավունքի ամրագրումը ինքնըստինքյան ենթադրում է դրա իրացման համար անհրաժեշտ ընթացակարգային իրավունքի ամրագրում, որի միջոցով օբյեկտիվ իրավունքը վերափոխվում է կոնկրետ անհատի սուբյեկտիվ իրավունքի:

Այսպիսի գաղափարական ընկալումները թույլ են տալիս արձանագրելու, որ ներկայում այլևս արդիական չէ խորհրդային իրավունքից հայտնի այն տեսակետը, որ ամբողջ իրավունքի կարգավորման կառուցակարգում նյութական իրավունքի նորմերն ու դրանցով կարգավորվող հարաբերություններն «առաջնային» են, իսկ վարութային իրավունքի նորմերը և դրանցով կարգավորվող հարաբերությունները՝ «երկրորդային»[4]:

Նյութականն ու ընթացակարգայինը չեն հարաբերակցվում ինչպես «առաջնային» ու «երկրորդական» կամ «հիմնական» ու «օժանդակող», սրանցից ոչ մեկը մյուսի նկատմամբ առավել «կարևոր» դիրք չի զբաղեցնում: Այս երկուսը միմյանց փոխլրացնող և անբաժանելի են իրավաչափ նպատակին հասնելու ճանապարհին:

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Գ.** «Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն». -Եր.: «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, 2020. - էջ 40:

[2] Առավել մանրամասն տե՛ս **Абдаримов Б.Ж.** «Административная юстиция: история и современность» // Международная научно-практическая конференция «Административное судопроизводство: проблемы и преспективы развития», Алмата, 2005. էջ 73-74:

[3] Տե՛ս **Մուղնեցյան Գ.,** նշված աշխատությունը, էջ 43:

[4] Տե՛ս օրինակ **Джалилов Д.Р.**, Системные аспекты проблемы соотношения материального и процессуального права: межвузовский тематический сборник // Вопросы развития и защиты прав граждан.- Калинин, 1977. էջ 31: **Недбайло П.Е.**, О юридических гарантиях правильного осуществления советских правовых норм // Советское государства и право, 1957, № 6. էջ 20,22: **Горшенев В. М.** Способы и организационные формы правового регулирования в социалистическом обществе, М., 1972. էջ 218: **Горшенев В. М.** О системе процессуального права в Советском государстве / Горшенев В. М., Дружков П.С. էջ 17: **Горшенев В. М., Недбайло П.Е.** Юридическая процессуальная форма теория и практика, М., 1976. էջ 26-40:

Նյութական իրավունքի նորմերն ու դրանցով կարգավորվող հարաբերությունները և ընթացակարգային իրավունքի նորմերը ու դրանցով կարգավորվող հարաբերությունները ունեն իրավական կարգավորման կառուցակարգում իրենց անփոխարինելի տեղն ու դերը: Վերջիններս իրավակարգավորման ողջ ընթացքում փոխլրացնում են միմյանց: Ինչպես նշվում է մասնագիտական գրականությունում՝ նյութականը և ընթացակարգայինը իրենց համակցությամբ մեկ ամբողջի (իրավունքի) էությունն են կազմում[1]:

Իրավունքի այս երկու տարրերը միասին անհրաժեշտ են և իրենց համակցության մեջ նոր միայն բավարար են իրավակարգավորման վերջնական նպատակին՝ իրավակարգին, հասնելու համար: Դրանք իրավական կարգավորման կառուցակարգում կատարում են նույն գործառույթը (իրավակարգավորող գործառույթը)[2]:

Վերոնշյալով հանդերձ՝ արտահայտվում է նյութականի և ընթացակարգային հարաբերակցությունը, իսկ վարչական իրավունքում դրանց հարաբերակցությունում նույնիսկ առավել հաճախ առաջնային է պատշաճ ընթացակարգի առկայությունը՝ որպես անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիք, քանի որ այստեղ հարաբերության կողմերը ըստ նյութական իրավունքի՝ հավասար դիրքերում չեն, այլ անձը մշտապես խնդրողի կարգավիճակում է:

Վարչական ընթացակարգային իրավունքում իր առանձնահատուկ տեղն ու դերն է զբաղեցնում վարչական վարույթը կարգավորող իրավունքը, որով սահմանվում է վարչական վարույթ իրականացնելու կարգը: Վերջինս ունի էական տարբերություններ վարչական այլ գործընթացներից, որոնց կանդրադառնանք ստորև:

Իրավական գործընթացներն ուսումնասիրող գիտնականներն ընդհանուր առմամբ դրանք ներկայացնում են երկու՝ լայն և նեղ (իրավազորային, յուրիսդիկցիոն) առումներով:

Իրավական գործընթացները լայն առումով ընկալող հեղինակներն այն նույնացնում են իրավակիրառ գործունեության հետ, իսկ ավանդական՝ նեղ առումով իրավական գործընթացը ուսումնասիրվում է իրավազորության (յուրիսդիկցիոն) տեսանկյունից[3]:

Մի խումբ վարչագետներ բովանդակային առումով «գործընթաց» եզրույթն ընկալում են որպես վեճերի լուծման գործընթաց և այդ եզրույթին վերագրում են իրավազոր բնույթ[4], այսինքն՝ այն կապում են իրավական վեճերի քննման և լուծման հետ: Այսպիսով՝ իրավազորության (յուրիսդիկցիոն) տեսությունում գոր-

---

[1] Տե՛ս **Մուղնեցյան Գ.,** նշված աշխատությունը, էջ 35:

[2] Առավել մանրամասն տե՛ս **Алексеев С.С.,** Механизм правового регулирования в социалистическом государстве, Изд: Юридическая литература, М., 1966. էջ 29-38:

[3] Իրավական գործընթացների լայն ու նեղ առումներով մոտեցումների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս, օրինակ, **Демин А. А.**, նշված աշխատությունը:

[4] «Իրավազորություն» եզրույթի, հատկապես վարչական իրավազորության էության, հիմնական հատկանիշների և հասկացության մասին առավել մանրամասն տե՛ս **Шергин А.П.** Административная юрисдикция. М.: Юрид.лит., 1979. էջ 7-59:

ծընթացը դիտարկվում է որպես վեճերի լուծման վերաբերող՝ օրենքով կարգավորվող գործունեություն[1]:

Իրավական գործընթացները լայն առումով ներկայացնող գիտնականների կարծիքով՝ իրավական գործընթացի ներքո չպետք է հասկանալ միայն դատական և արտադատական վարույթներով վեճերի լուծումը, դրանում ներառվում են պետական մարմինների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավունքի այլ սուբյեկտների գործունեության բացարձակապես բոլոր իրավական ձևերը, որոնք ուղղված են որոշակի իրավական խնդիրների, հարցերի լուծմանը[2]:

Այդպիսի իրավական գործընթացներից մեկն էլ վարչական վարույթն է, որի բնորոշման վերաբերյալ վարչագետների կողմից չի ձևավորվել մեկ միասնական տեսակետ և վարչական վարույթ հասկացությունը գործնականում և իրավունքի տեսությունում կիրառվում է մի քանի նշանակությամբ, որոնցից յուրաքանչյուրն ունի գիտագործնական կարևոր նշանակություն և կիրառման լայն շրջանակներ[3]:

Իրավաբանական գրականության մեջ որոշ հեղինակներ վարչական գործընթացը ընկալում են նեղ առումով, միայն որպես դատազորային գործունեություն, այսինքն՝ գործունեություն, որն ուղղված է միմյանց նկատմամբ ծառայողական ենթակայության տակ չգտնվող, վարչական իրավահարաբերության մասնակիցների միջև ծագած վեճերի լուծմանը, ինչպես նաև վարչական հարկադրանքի միջոցների կիրառմանը, իսկ վարույթը դիտարկում են որպես առավել լայն հասկացություն՝ որպես գործադիր կարգադրիչ մարմինների գործունեության կարգ և վարչաիրավական նորմերի կիրառման գործընթաց[4]:

Ըստ ռուս իրավագետ Դ. Բախրախի՝ «վարույթ» եզրույթը ոչ միայն նշանակում է յուրահատուկ գործերի լուծման հատուկ կարգ, այլև այն օգտագործվում է գործընթացի փուլեր (կատարողական վարույթ, բողոքարկման վարույթ և այլն) մատնանշելու համար[5]: Մեկ այլ ռուս իրավագետ՝ Վ. Դ. Սորոկինը, նշում է, որ վարույթը վարչական գործընթացի բաղկացուցիչ մասն է, որի տակ հասկացվում է վարչական-ընթացակարգային նորմերի վրա հիմնված գործունեություն՝ ուղղված պետական կառավարման ոլորտում կոնկրետ անհատական

---

[1] Տե՛ս **Салищева Н.Г.** К вопросу об административном процессе в СССР // Вопросы административного права на современном этапе, М., 1963. էջ 16. **Протасов В.Н.** Основы общеправовой процессуальной теории. М.: Юрид.лит., 1991. էջ 29-31: **Лукьянова Е.Г.** Механизм процессуального регулирования и его элементы // "Журнал российского права", N 7, июль 2001. էջ 94: **Уткин Д.В.** Административное судопроизводство в современном правовом государстве: Автореф. дис. ... канд. юрид. наук. Воронеж: ФГУП ИПФ «Воронеж», 2004. էջ 11-12:

[2] Տե՛ս Теория юридического процесса / [В. М. Горшенев, В. Г. Крупин, Ю. И. Мельников и др.]; Под общ. ред. **В. М. Горшенева**. - Харьков : Вища шк. : Изд-во при Харьк. ун-те, 1985. էջ 8: **Малько, А.В.** Теория государства и права в вопросах и ответах : учебно - методическое пособие / А.В. Малько. - 5-е изд., испр. и доп. — Москва : Издательский дом «Дело» РАНХиГС, 2019. էջ 127:

[3] Տե՛ս **Դանիելյան Գ.** «Վարչական վարույթ և դատավարություն», Տիգրան Մեծ հրատարակչություն, Երևան, 2011, էջ 15:

[4] Տե՛ս **Салищева Н. Г.**, Административный процесс в СССР. - М., 1964. - էջ 8, **Сорокин В. Д.**, Административно-процессуальное право. - СПб. 2004. էջ 21:

[5] Տե՛ս **Бахрах Д. Н.**, **Россинский Б. В.**, **Старилов Ю. Н.**, Административное право: Учебник для вузов. - 3-е издание, пересмотр, и доп. - М.: Норма, 2007. - էջ 603:

գործերի քննմանը[1]: Յուրաքանչյուր վարչական վարույթ է իրավական նորմերի համակարգ է, որը սահմանում է այս կամ այն միասեռ խումբ կառավարչական գործերի քննման և լուծման կարգը[2]:

Քանի որ մեր հետազոտության նպատակներից չի բխում խորանալ վարչական վարույթի տեսական ու գործնական բնորոշումների դաշտում, կարծանագրենք, որ որպես ընդհանուր կանոն վարչական վարույթ հասկացությունը այստեղ կօգտագործվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի[3] 19-րդ հոդվածով նախատեսված բնորոշմանը համաձայն, եթե հատուկ այլ բանի մասին նշում չենք կատարել:

Հիշատակված պոզիտիվ կարգավորմամբ սահմանվում է, որ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է: Այսպիսի բնորոշումից հետևում է, որ վարչական վարույթը վարչական մարմնի այնպիսի գործունեության կարգ է, որը ենթադրաբար պետք է եզրափակվի վարչական ակտի ընդունմամբ: Եթե վարչական մարմինը որևէ իրավիճակում ունի գործելու պոզիտիվ պարտականություն և այդպիսի իրավիճակում անհրաժեշտ է լինելու ընդունել վարչական ակտ, ապա պարտավոր է իրականացնել վարչական վարույթ:

Վարչական մարմնի այս գործունեության տեսակը վարչարարության մյուս տեսակներից տարբերվում է առաջին հերթին առավել խիստ կանոնակարգվածության հատկանիշով, որն արտահայտվում է թե՛ կառուցվածքային և թե՛ ընթացակարգային կողմերով:

Կառուցվածքային տեսանկյունից վարչական վարույթը ստատիկ համակարգ է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա **(հարուցման փուլ)**: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառույթները **(ընթացիկ փուլ)**: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ **(եզրափակիչ փուլ)**:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ վարչական վարույթը կառուցվածքային առումով եռակազմ համակարգ է:

Ընթացակարգային առումով վարչական վարույթի կանոնակարգվածությունն արտահայտվում է յուրաքանչյուր փուլում իրավահարաբերության մասնակիցների իրավունքների ու պարտականությունների սահմանմամբ, ինչպես նաև կառուցվածքային ամբողջությունը կազմող փուլերի փոխլրացման կարգով տրամաբանորեն իրար հաջորդելու կարգավորվածությամբ:

---

[1] Տե՛ս **Сорокин В. Д.,** Административно-процессуальное право. - М., 1972. - էջ 149:

[2] Տե՛ս Административный право. Краткий курс, 2-е изд. Под общей редакций **П. П. Глущенко.** Питер, 2010. - էջ 172:

[3] ՀՕ-41-Ն օրենքն ընդունվել է 18.02.2004թ., ուժի մեջ է մտել՝ 31.12.2004թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկով վարչական վարույթը բնորոշել է որպես մի գործընթաց, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունումը *(տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հանքարտադրողների ոլորտային հարկային տեսչությունն ընդդեմ «Գևորգ-Ա» ՍՊԸ-ի թիվ 3-918(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը):*

Վարչարարության որևէ այլ տեսակ այսպիսի խիստ կանոնակարգման ենթարկված չէ, ինչը վարչական վարույթը կարգավորող իրավունքին առանձնահատուկ դեր է տալիս ընդհանրապես վարչական և մասնավորապես վարչական ընթացակարգային իրավունքում:

Վարչական վարույթը, ի տարբերություն վարչարարության այլ տեսակների (այստեղ որոշ վերապահումներ կարելի է կատարել նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ եզրափակվող վարչարարության մասով), կառուցվածքայնությամբ օժտված համակարգ է: Ասվածի համար հիմք է հանդիսանում գործող իրավական կարգավորումների վերլուծությունը, որտեղ կառուցվածքային առումով հստակ իրավակարգավորման է ենթարկված բացառապես վարչական վարույթը:

Վարչական վարույթի կառուցվածքային և ընթացակարգային հատկանիշներով օժտվածությունը թույլ է տալիս հետևություն անել այն մասին, որ առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները կառուցվածքի և/կամ ընթացակարգի առանձին հատկություններն են:

Այսպիսով, անդրադառնալով վարչական իրավունքի և վարչական վարույթը կարգավորող իրավունքի հարաբերակցությանը՝ կարող ենք արձանագրել, որ վարչական իրավունքը նյութականի և ընթացակարգայինի ամբողջություն է, իսկ վերջինս վարչական վարույթը կարգավորող իրավունքի և վարչաընթացակարգային իրավահարաբերությունները կարգավորող մյուս իրավանորմերի ամբողջությունն է:

Այստեղ տեղին է նաև անդրադառնալ վարչագետների այն առաջարկին, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է ամրագրել նաև առանձնահատկություններ նախատեսելու հնարավորություն վարչարարության առնչությամբ[1]: Կարծում ենք, որ վարչարարության առանձնահատկություններ նախատեսելու իրավական հիմքի ամրագրման անհրաժեշտությունն իսնքնըստինքյան բացակայում է, քանի որ ի տարբերություն վարչական վարույթի՝ վարչարարության այլ ձևերի կառուցվածքային և ընթացակարգային հատկանիշները, ինպիսիք են փուլայնությունը, սկիզբն ու ավարտը, տևողությունը, իրականացման հատուկ կարգը, օժտված չեն այդպիսի խիստ կանոնակարգվածության:

---

[1] Տե՛ս **Սարգսյան Վ.Ա.** «Վարչական մարմինների հայեցողական լիազորությունների սահմանները», ատենախոսություն ԺԲ.00.02 Հանրային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար, Երևան, 2017. էջ 8: **Դանիելյան Ա.** «Վարչարարության համակարգում եզրութաբանության ակտի հիմնախնդիրները», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(1)2018, Երևան, էջ 92:

Ավելին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը սահմանում է բացառապես վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնք կիրառելի են վարչարարության ցանկացած տեսակի նկատմամբ, ուստի անհրաժեշտություն չկա օրենքով ամրագրել վարչարարության առանձին տեսակների նախատեսման իրավական հիմք:

Ամփոփելով արձանագրենք հետևյալը՝

Վարչական իրավունքը ներառում է նյութականը և ընթացակարգայինը, ինչպես, օրինակ՝ սահմանադրական, միջազգային և այլ իրավունքի ճյուղերը, սակայն վարչական իրավունքում ընթացակարգային իրավակարգավորումներն ու դրանցով կարգավորվող հարաբերությունները՝ որպես պատշաճ իրավական գործընթացներ, գերակշռող և առաջնային են՝ որպես անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիք, քան ցանկացած այլ իրավունքի ճյուղում, ինչը վարչական իրավունքի հիմնական առանձնահատկություններից մեկն է:

Վարչական ընթացակարգային իրավունքում արտահայտվում է վարչական վարույթը կարգավորող իրավունքի առանձնահատկությունը՝ որպես իրավական գործընթացը կարգավորող ընթացակարգ իր առավել խիստ կանոնակարգվածությամբ, ինչը դրսևորվում է կառուցվածքային և ընթացակարգային կողմերով:

СООТНОШЕНИЕ АДМИНИСТРАТИВНОГО ПРАВА И ПРАВА, РЕГУЛИРУЮЩЕГО АДМИНИСТРАТИВНОЕ ПРОИЗВОДСТВО

Норайр Авагян
Аспирант кафедры конституционного права ЕГУ

В данной научной статье автор провел анализ соотношения материальных и процессуальных прав в контексте административного права.

В результате автор пришел к обоснованным выводам о том, что административное право включает в себя и материальное, и процессуальное, но в административном праве процессуально-правовые нормы и регулируемые ими отношения, как собственно правовые процессы, являются преобладающими и первичными, как гарантия защиты права, в которой выражается главная черта административного права. Административное производство, в отличие от других форм администрирования, подлежит более жесткой регламентации, что выражается в его структурно-процессуальных аспектах. Право регулирующую административно производство выражает специфику с его строгой регламентацией, которая выражается в структурно-процессуальном аспекте.

RELATIONSHIP OF ADMINISTRATIVE LAW AND THE LAW REGULATING ADMINISTRATIVE PROCEEDINGS

Norayr Avagyan
PHD Student at the YSU Chair of Constitutional Law

In this scientific article, the author analyzed the correlation of substantive and procedural rights in the context of administrative law.

As a result, the author came to reasonable conclusions that Administrative law includes both substantive and procedural law, but in administrative law, procedural and legal norms and the relations regulated by them, as proper legal processes, are predominant and primary, as a guarantee of the protection of the right, which expresses the main feature of administrative law. Administrative proceedings, unlike other forms of administration, are subject to more stringent regulation, which is expressed in its structural and procedural aspects. The law regulating administrative proceedings expresses specificity with its strict regulation, which is expressed in the structural and procedural aspect.

Բանալի բառեր - *առանձին տեսակի վարչական վարույթ, վարչական վարույթի առանձնահատկություններ, վարչական վարույթի խիստ կանոնակարգ-վածություն, կառուցվածքային և ընթացակարգային առանձնահատկություններ*
Ключевые слова: *отдельные виды административного производства, особенности административного производства, строгая регламентация административного производства, структурно-процессуальные особенности*
Key words: *separate types of administrative proceedings, peculiarities of administrative proceedings, strict regulation of administrative proceedings, structural and procedural peculiarities*